ԻՐԱՔՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ (2003Թ.) ՍԻՐԻԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Թուրքիան, որը սառը պատերազմի տարիներին տարածաշրջանում ԱՄՆ-ի թիվ մեկ գործընկերն էր, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո կարծես թե մի պահ կորցրեց իր աշխարհաքաղաքական նշանակությունը Արևմուտքի համար, քանի որ այլևս առճակատման սահմանագծում չէր: Սակայն «սեպտեմբերի 11-ի» իրադարձությունները շրջադարձային եղան. Թուրքիան կրկին հայտնվեց սեփական ռազմավարական նշանակությունը վերագտնելու ճանապարհին: 2003 թ. ԱՄՆ-ի ձեռնարկած իրաքյան արշավը փորձաքար դարձավ թուրք-ամերիկյան ռազմավարական հարաբերությունների համար՝ ազդարարելով որակական նոր փոփոխություններ:

ԱՄՆ-ը Իրաքի դեմ գործողություններ սկսելու և դրանց բարեհաջող ընթացքն ապահովելու համար ձգտում էր հյուսիսային ճակատ բացել և այդ հարցում ապավինում էր Թուրքիայի աջակցությանը[1]: Թուրքիան, իր հերթին, առաջ էր քաշում իր պայմանները, որոնցից առաջնայինը դաշնակիցների հետ համատեղ կամ նույնիսկ առանձին թուրքական զորքերի ներխուժումն էր Հյուսիսային Իրաք[2], ինչին ամերիկացիները չէին կարող համաձայնվել՝ նկատի առնելով քրդերի հավանական դիմադրությունն ու, որպես հետևանք՝ Իրաքի ներսում քրդերին որպես դաշնակիցներ կորցնելու վտանգը:

Երկրորդ կարևոր խնդիրն այն էր, որ թուրքերը պահանջում էին հստակեցնել պատերազմից հետո Հյուսիսային Իրաքի քրդերի և թուրքմենների կարգավիճակը[3]: Բանն այն է, որ Իրաքի տարածքային ամբողջականության պահպանումը կենսական նշանակություն ուներ և շարունակում է ունենալ Թուրքիայի համար: Անկարային չէին բավարարում վերոհիշյալ հարցերում Վաշինգտոնի բանավոր երաշխիքները[4]:

---

[1] ԱՄՆ-ը նպատակ ուներ Թուրքիայի տարածքով 60-90 հազար զինվոր մտցնել Հյուսիսային Իրաք:

[2] Թուրքական կողմը հավատացած էր, որ եթե Մոսուլ-Քիրքուքի նավթն անցներ քրդերի ձեռքը, ապա անխուսափելի կլիներ քրդական պետության հիմնումը:

[3] Ս. Նաքարյան. Թուրք-ամերիկյան հարաբերություններ (2003-2006), 21-րդ դար, № 2, 2006, էջ 91:

[4] **А. А. Гурьев**, Оценка Турцией действий США в Ираке, Институт Ближнего Востока, 27.05.2005, www.iimes.ru

Թուրքիայի համար շատ կարևոր էր հաստակեցնել իրաքյան պատերազմում իր մասնակցության ձևը: Թուրք-ամերիկյան հարաբերությունները սրվեցին հատկապես այն ժամանակ, երբ Թուրքիայի խորհրդարանը թույլ չտվեց ԱՄՆ-ի գլխավորած դաշնակից ուժերին Իրաքի դեմ պատերազմում[5] օգտագործել Թուրքիայի տարածքը: Ի վերջո, ԱՄՆ-ը թույլ չտվեց թուրքական զորքերի մուտքը Հյուսիսային Իրաք՝ ստանալով իրաքյան քրդերի անվերապահ աջակցությունը ներիրաքյան հարցերում: Քուրդ-ամերիկյան համագործակցության այսպիսի դրսևորումները եթե ոչ ուղղակի, ապա անուղղակի սպառնալիք էին Թուրքիայի համար, որը դեռևս չի լուծել քրդական խնդիրը սեփական երկրում:

Ինչ վերաբերում է Սիրիային, ապա պետք է նշել, որ սիրիա-ամերիկյան հարաբերությունները դեռևս XX դարի կեսերից այս կամ այն չափով պայմանավորված են սիրիա-իսրայելյան հակամարտությամբ, ապա նաև Լիբանանի ներքին քաղաքական իրավիճակի վրա Սիրիայի ազդեցությամբ և սիրիա-իրաքյան սահմանի անվերահսկելիության խնդիրներով: ԱՄՆ-ը, լինելով Իսրայելի ռազմավարական գործընկերը, պաշտպանում էր այդ երկրի շահերը սիրիա-իսրայելական հակամարտությունում:

Ամերիկյան զորքերի Իրաք ներխուժման հարցում Սիրիայի կտրականապես բացասական դիրքորոշումը ավելի սրեց սիրիա-ամերիկյան հարաբերություններում առկա լարվածությունը[6]: Սիրիան քաջ գիտակցում էր, որ Իրաքի տարածք ներխուժումը և այնտեղ ամերիկյան տիրապետության հաստատումը խիստ կվնասեր Սիրիայի աշխարհաքաղաքական դրությանը և կվտանգեր տարածաշրջանային կայունությունը: Դամասկոսում գիտակցում էին, որ երկիրը կհայտնվի ամերիկա-իսրայելական աքցանի մեջ, մանավանդ եթե նկատի առնենք ԱՄՆ-ի և Իսրայելի ընդգծված թշնամական քաղաքականությունը Իրանի նկատմամբ, որի հետ Սիրիան գտնվում է ռազմաքաղաքական սերտ հարաբերությունների մեջ[7]:

ԱՄՆ-ի և կոալիցիոն զորքերի կողմից Իրաք ներխուժումից առաջ՝ 2003թ., սիրիա-թուրքական համագործակցությունը էլ ավելի բարելավվեց՝ և որակապես նոր աստիճանի բարձրացավ: Իրաքյան պատերազմը քաղաքական առումով ձեռնտու չէր ոչ Սիրիային, ոչ էլ Թուրքիային: Տարածաշրջանային անկայունությունը ոչ միայն կվնասեր երկու երկրների տնտեսական փոխգոր-

---

[5] Նույն տեղում:

[6] **А. А. Волович**, Осложнение сирийско-американских отношений в контексте иракского кризиса, Институт Ближнего Востока, 09.11.2004, www.iimes.ru:

[7] **Ն.Հովհաննիսյան**, Արաբական երկրների պատմության, հատոր 4-րդ, էջ 542

ծակցությանը, այլև քաղաքական մեծ գլխացավանք կստեղծեր՝ ի դեմս իրաքյան քրդերի ակտիվացման, որոնք վերստին կբարձրացնեին անկախ պետականություն ունենալու պահանջը: Իրաքյան ներխուժումը կարող էր հանգեցնել Թուրքիայում քրդական առանց այդ էլ չհանդարտվող շարժման ակտիվացմանը և երկիրը կանգնեցնել մեծ ցնցումների եզրին: Իսկ Սիրիայի համար «քրդական խնդիրը» հոգի էր նաև ամերիկյան ներխուժման վտանգով, քանի որ ԱՄՆ-ը վաղուց արդեն «չարիքի առանցքը» կազմող երկրների (Կուբա, Հյուսիսային Կորեա, Իրան) շարքին դասել էր նաև Սիրիային: Ըստ սիրիական մեկնաբանների՝ ԱՄՆ-ը առիթ էր փնտրում նաև այդ երկրի վրա հարձակվելու համար[8]: Ըստ այդմ՝ Սիրիայի քրդական ստվար համայնքը պատեհ առիթի դեպքում կարող էր օգտագործվել քաղաքական նպատակներով:

Ասվածի վառ վկայությունը 2004թ. գարնանը ծավալված իրադարձություններն են: Սիրիայի հյուսիսում գտնվող Ղամիշլի քաղաքում ֆուտբոլային խաղի ժամանակ քուրդ և արաբ երկրպագուների միջև ծեծկռտուք տեղի ունեցավ, որի հետևանքով զոհվեց մեկ, վիրավորվեց 17 մարդ: Ոչ պաշտոնական վարկածներից մեկի համաձայն, ծեծկռտուքը լավ ծրագրված սադրանքի հետևանք էր, երբ խաղի ժամանակ արաբ երկրպագուները սկսեցին վանկարկել՝ «Կեցցե՞ Սադամ Հուսեյնը», ինչն առաջացրեց քուրդ երկրպագուների դժգոհությունն ու զայրույթը: Մեկ այլ վարկածի համաձայն ծեծկռտուքի ժամանակ հնչել էին հրահրիչ կարգախոսներ ուղղված Սիրիայի կառավարող վարչակազմի դեմ: Հետագա օրերին տեղի ունեցան մեծ հանրահավաքներ և ցույցեր: Չնայած իշխանությունների՝ հանդարտվելու և իրավիճակը լիցքաթափելու քրդական համայնքի ղեկավարներին ուղղված կոչերին, բողոքի գործողություններ տեղի ունեցան նաև այլ քաղաքներում: Սիրիայի իշխանությունները և Սիրիայում գործող քրդական որոշ կազմակերպություններ իրավիճակի սրման հիմնական մեղավոր էին համարում «արտաքին ուժերին»: Քրդական ազգային-ժողովրդավարական վերածննդի կուսակցության քաղբյուրոյի անդամ Համադալ Ասաադը հայտարարեց, որ Ղամիշլիի քրդերի և արաբների միջև երբեք տարաձայնություններ չեն եղել, մինչդեռ որոշ վայրերում ցուցարարները բարձրացրել են ամերիկյան դրոշներ, ինչը վկայում է, որ արտաքին ուժերի միջամտությունն ուղղված էր երկրի ներքին կայունության խաթարմանը[9]:

---

[8] **Վ. Ֆ. Ցեننիկով**, Страны Ближнего Востока и ситуация в Ираке, Институт Ближнего Востока, 18.04.2003, www.iimes.ru.

[9] **Ա. Ա. Արտյոմյան**, Турецко-сирийские отношения на рубеже веков (1980-е годы- начало XXI века), Диссертация на соискание уч. степени к.и.н., Москва, 2007, с 155.

Անկարող լինելով երկրի հյուսիսում բարձրացած խռովությունը լուծել խաղաղ միջոցներով՝ Սիրիայի իշխանությունները այն ճնշեցին ուժով: Այդ գործողությունների ժամանակ պաշտոնական տվյալներով զոհվեց 25 մարդ, ըստ Քրդստանի դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչների զոհերի թիվը 70 էր, իսկ վիրավորվածներինը 400[10]: Ձերբակալվեց մի քանի հարյուր քուրդ, որոնց մեծ մասը (մոտ 300 հոգի) ազատ արձակվեց մեկ տարի անց: Սիրիան նաև Թուրքիային հանձնեց Քրդական աշխատավորական կուսակցության 70 անդամների:

Այս քայլերով սիրիական իշխանությունները արտաքին աշխարհին, մանավանդ Իրաքի քրդական հատվածի ղեկավարներին ցույց տվեցին, որ չեն հանդուրժելու քրդական ազգային-ազատագրական շարժման տեղափոխումը Սիրիայի տարածք, բացի այդ թույլ չեն տալու, որպեսզի քրդական գործոնը կռվախնձոր դառնա Թուրքիայի հետ հարաբերություններում: Նման քայլերը նաև ակներև դարձրին քրդական հարցում Սիրիայի և Թուրքիայի ավելի սերտ համագործակցության անհրաժեշտությունը:

Վերադառնալով Իրաքի նախապատերազմյան իրավիճակին նշենք, որ տնտեսական առումով պատերազմը Սիրիային և Թուրքիային շատ ծանր հետևանքներ էր խոստանում: Նախքան Իրաքի պատերազմը Սիրիան էժան նավթ էր ներմուծում այդ երկրից, սակայն պատերազմից հետո Սիրիայի տարածքով իրաքյան նավթի՝ դեպի Միջերկրական ծովի ավազան տարանցումը դադարեցվեց: Այդ պատճառով Սիրիան ստիպված էր իր նավթի արտահանման ծավալները նվազեցնել 10 տոկոսով[11]: Թուրքական տնտեսությունը ևս զգալիորեն տուժեց. նախքան պատերազմը երկիրը զգալի շահույթներ էր ստանում Իրաքի հետ սահմանային գոտում առևտրից և «նավթ պարենի դիմաց» ծրագրի իրագործումից:

Թուրքիայի համար հարևան երկրների հետ համագործակցությունը խորացնելու անհրաժեշտությունը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ ԱՄՆ-ը մերժեց Թուրքիային ընդգրկել Իրաքի վերականգնման ծրագրերում: Սա Թուրքիայի և ԱՄՆ-ի հարաբերությունների վատթարացման հաջորդ դրսևորումներից էր, իսկ հետագայում այդ հարաբերություններում նոր խոչընդոտներ հայտնվեցին, երբ ԱՄՆ կառավարությունը սկսեց բացահայտորեն աջակցել իրաքյան քրդերին[12]:

---

[10] «Ալ Հայաթ», 19.03.2004, "РИА Новости", 31.03.2005.
[11] **А. А. Волович**, նշվ. աշխ.:
[12] **А. А. Гурьев**, նշվ. աշխ.:

Այս և նման գործընթացների հետևանքով տարածաշրջանի երկրները հարկադրված էին միասնական և համընդհանուր գործողությունների ծրագիր մշակել, ինչն էլ Թուրքիայի համար Սիրիայի, Իրանի և Եգիպտոսի հետ փոխարաբերությունների սերտացման ազդակ դարձավ: Խոսուն է այն փաստը, որ Իրաքում պատերազմը կանխելու նպատակով Թուրքիայի այն ժամանակվա վարչապետ Ա. Գյուլը 2002թ. վերջին - 2003թ. սկզբին այցելեց տարածաշրջանի երկրներ՝ Սիրիա, Եգիպտոս, Հորդանան, Սաուդյան Արաբիա և Իրան՝ փորձելով այդ երկրների ղեկավարների աջակցությամբ միասնական ճակատ կազմել սպառնալիքի դեմ և կանխել պատերազմը[13]: Այս նպատակով 2003 թ. հունվարի 23-ին Ստամբուլում հրավիրվեց գագաթնաժողով, որին մասնակցեցին վերոնշյալ երկրների արտգործնախարարները: Ստորագրվեց համատեղ հայտարարություն Իրաքի տարածքային բաժանման անթույլատրելիության և խնդրի խաղաղ լուծման անհրաժեշտության մասին: Նույն խնդրին նվիրված ևս մեկ հանդիպում տեղի ունեցավ 2003 թ. ապրիլին՝ էր-Ռիյադում[14]:

Թեև պատերազմը չհաջողվեց կանխել, սակայն Թուրքիայի և Սիրիայի միջև ակտիվ համագործակցությունը նոր թափ առավ: Այս երկու երկրների անմիջական ջանքերով 2004թ. փետրվարի 15-ին Քուվեյթում անցկացվեց հերթական տարածաշրջանային համաժողովը՝ նվիրված Իրաքի անվտանգության և քաղաքական ապագայի հիմնահարցերին: Համաժողովին մասնակցում էին Իրաքի և հարևան երկրների՝ Սիրիայի, Թուրքիայի, Հորդանանի, Սաուդյան Արաբիայի, Իրանի, Քուվեյթի արտգործնախարարները: Հրավիրվածների թվում էին նաև Եգիպտոսի և Բահրեյնի արտգործնախարարները: Համաժողովի մասնակիցները միահամուռ պաշտպանեցին հետսադամյան Իրաքի տարածքային ամբողջականությունը և պարտավորվեցին չմիջամտել այդ երկրի ներքին գործերին[15]: 2005 թ. Ստամբուլում կայացած հանդիպման ժամանակ Սիրիայի, Թուրքիայի, Հորդանանի, Սաուդյան Արաբիայի, Իրանի, Քուվեյթի և Եգիպտոսի արտգործնախարարները պայմանավորվեցին համագործակցել Իրաքի նոր կառավարության հետ Իրաքի սահմանը համատեղ հսկելու և անվտանգությունն ապահովելու շուրջ՝ սահմանի վատ հսկվող հատվածներից խռովարարների ներթափանցումը կանխելու համար:

Սիրիա-թուրքական հարաբերությունների կտրուկ բարելավումն իր հերթին հարուցեց ԱՄՆ-ի անհանգստությունն ու զայրույթը: ԱՄՆ-ը անթաքույց փորձեց հանոգել իր դաշնակից Թուրքիային՝ վերանայելու հարաբերություններ-

---

[13] See Middle East, N 334, May 2003, p. 37.
[14] Turkiye, 24.01.2003.
[15] Независимая газета, 17.02.2004.

որը Սիրիայի հետ, որի հասցեին միջազգային ահաբեկչությունը հովանավորելու լուրջ մեղադրանքներ էին հնչում: Իսրայելն իր հերթին բազմիցս արտահայտեց իր մտահոգությունները թուրք-սիրիական հարաբերությունների զարգացման վերաբերյալ: Վաշինգտոնի կոչտ դիրքորոշումն արտացոլվեց 2003 թ. դեկտեմբերին նախագահ Բուշի կողմից ստորագրված մի փաստաթղթում, որը կոչվեց «Սիրիայի պատասխանատվության ակտ»: Վերջինս նախատեսում էր Սիրիայի նկատմամբ կիրառել խիստ պատժամիջոցներ, եթե նա «չդադարեցնի իր օժանդակությունը պաղեստինյան ահաբեկչական -կազմակերպություններին, վերջ չտա իր ռազմական և անվտանգության ուժերի ներկայությանը Լիբանանում, չկասեցնի զանգվածային ոչնչացման զենք ձեռք բերելու իր ջանքերը և չկատարի Իրաքի կայունացմանն ու վերականգնմանն ուղղված՝ ՄԱԿ-ի ԱԽ որոշումներով իր վրա դրված պարտավորությունները»[16]:

Կարելի է ասել, որ Իրաքի խնդրի շուրջ Սիրիայի և Թուրքիայի ղեկավարների դիրքորոշումներն ու մոտեցումները որոշակի դեր խաղացին ոչ միայն երկու երկրների մերձեցման, այլև տարածաշրջանային և միջազգային խնդիրների վերաբերյալ նրանց դիրքորոշումների հստակեցման և ակտիվ քաղաքական խորհրդակցությունների անցկացման հարցերում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Իրաքի դեմ ռազմական գործողությունների հետևանքով Մերձավոր Արևելքում ստեղծված ուժերի նոր դասավորությունը հանգեցրեց քաղաքական նոր ախոյանների ու դաշնակիցների հարաբերությունների վերանայմանը: Տարածաշրջանի երկրների նկատմամբ Վաշինգտոնի՝ ռազմական և տնտեսական ճնշումների միջոցով իրականացվող քաղաքականությունը, որի դրսևորումներից մեկը հանուն սեփական շահերի քրդական խաղաքարտի օգտագործումն էր, լրացուցիչ խթան դարձնա Սիրիայի և Թուրքիայի համար՝ իրենց հարաբերություններն ավելի հարթելու և գոյություն ունեցող վիճահարույց հարցերը փոխզիջմամբ լուծելու համար: Փաստորեն Թուրքիայի և Սիրիայի համար քրդական հարցը, որը երկար տարիներ նրանց տարածայնությունների հիմքն էր, առանցքային դարձավ բազմաբնույթ համագործակցության զարգացման համար: Բացի այդ, Թուրքիան, օգտագործելով Սիրիայի հետ հարաբերությունները, սկսեց նրա օգնությամբ ավելի վստահ քայլեր անել արաբական երկրների հետ իր փոխհարաբերությունների բարելավման ու զարգացման ուղղությամբ:

---

[16] **А. А. Волович**, Осложнение сирийско-американских отношений в контексте иракского кризиса. Институт Ближнего Востока, 09.11.2004, www.iimes.ru.